**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ԵԱ-ԳՀԾՁԲ-25/78 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **26 նոյեմբերի 2025թ.**

2025թ. նոյեմբերի 18-ից 26-ը, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ գազաբալոնների ճնշափորձարկման ծառայության ձեռքբերման ԵԱ-ԳՀԾՁԲ-25/78 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Գ. Պողոսյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Ա. Գալստյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տեխնիկական բաժնի պետ, |
| Ս. Ավագյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը՝ «ՓՐՈՄՈՈՒԾՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին Հավելվածով Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. նոյեմբերի 18-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում ժամը 17:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Գազաբալոնների ճնշափորձարկում | 12,180,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՀԵԴՎԻԳ» ՍՊԸ | Ք. Երևան, Գյուրջյան 10/8 | 055973379 | hedvigllc22@gmail.com | 02857506 |
| 2 | «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ | ք. Երևան, Թևոսյան 2/2 | 099447465, 093447465 | hexine.smbatyan@gmail.com | 43061004 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | Գազաբալոնների ճնշափորձարկում | «ՀԵԴՎԻԳ» ՍՊԸ | 12,180,000.00 | 12,090,000.00 | - | 12,090,000.00 |
| | | «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ | | 10,888,000.00 | - | 10,888,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հայտերի գնահատման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել պարզելու Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի՝ «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ-ի կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը:

2025թ. նոյեմբերի 21-ին, գնահատող հանձնաժողովի կողմից «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ-ի հայտով ներկայացվող տվյալների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» Ա/Ձ-ի ԾՄԿ-յան սպասարկման կայանի լայնությունը 2.8 մետր է, որը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին, դարպասի բարձրությունը պակաս է, քան Ընթացակարգի հրավերով նշված պայմանն է, ինչպես նաև չի համապատասխանում խորությունը, որը 13 մետրից պակաս է, տեխզննման կայանի դիմացի հատվածի լայնությունը 10 մետր է, իսկ երկարությունը 30 մետր է, ինչը անհնար է դարձնում 3 հատ 12 մետր երկարություն ունեցող ավտոբուսների կայանելը և սպասարկվելը, ինչպես նաև նշված տեխզննման կայանի հասցեում անհնար է 12 մետր երկարություն ունեցող MAN ավտոբուսների մոտենալը գազաբալոնների ճնշափորձարկման տեխզննման կայանին, քանի որ կայան տանող փողոցը նեղ է՝ նշված ավտոբուսի անցկացման համար: Բացի այդ Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանված է, որ կատարողը պետք է տեխզննման կայանում ունենա համապատասխան համակարգչային ճնշափորձարկման իրականացման

ծրագրավորում, որը գնահատող հանձնաժողովի ստուգումից հետո պարզ է դարձել, որ բացակայում է Ձեզ մոտ: Միաժամանակ տվյալ «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» Ա/Ձ-ի մոտ բացակայում էր գազաբալոնի ճնշափորձարկման հոսքագծային ավտոմատացված համակարգը, ճնշափորձարկման թվային բարձր ճշգրիտ սարքերը, ճնշափորձարկման ամբողջ գործընթացի համակարգչային ղեկավարում, 4 մետր երկարության հակապայթունային անվտանգության ջրային հատուկ պատյանը, գազաբալոնի փականի քանդման և տեղադրման համակարգչային ճշգրիտ սարքավորումը, որը թույլ է տալիս փականը գազաբալոնի վրա տեղադրել ճշգրիտ ուժի (նյուտոն/մետր) կիրառմամբ: Նշված անհամապատասխանությունների վերաբերյալ առկա են նաև տեսաձայնագրված նյութեր:

Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը, նիստը կասեցնել և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև 2025թ. նոյեմբերի 24-ը ներառյալ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով հանձնաժողովին ներկայացնել վերոնշյալ կետերը հիմնավորող փաստաթղթերը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2025թ. նոյեմբերի 25-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել անհրաժեշտ տեղեկատվությունը հավաստող փաստաթղթեր:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2025թ. նոյեմբերի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ-ի հայտը գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենին՝ սահմանված կարգով:
4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| **Չ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 1-ին | «ՀԵԴՎԻԳ» ՍՊԸ | բավարար |
| | «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2025թ. նոյեմբերի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «ՀԵԴՎԻԳ» ՍՊԸ | X | 12,090,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ. նոյեմբերի 26-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատված:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան _______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան _______________

Գ. Պողոսյան _______________

Ա. Գալստյան _______________

Ս. Ավագյան _______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան _______________